

## Մաթեմատիկա

*Թեման*- 2-ի գումարում և հանում

*Նպատակը*- 1.Ծանոթացնել 2-ի գումարման և հանման եղանակներին:

2.Աշակերտներին վարժեցնել 2-ական ավելացնելու և հանելու գործողությանը:

*Կահավորումը*- Նկարագարդ թվային առանցք, քարտեր, թվեր:

*Ընթացքը*- 1.Հաշվել մատներով (վեր պարզած) ուղիղ և ետ

2. Համեմատել աջ և ձախ ձեռքի մատները( ըստ քանակի և ըստ ձևի): Մաթեմատիկորեն գրել գրատախտակին: Սկզբում մեկական, հետո երկուական մատիկներ համեմատել:

3.Համեմատել մեկ փիղը երեք մրջյունի հետ: Որոշել, թե որն է ծանր կշռով և որն է շատ քանակով: Գրել մաթեմատիկորեն գրատախտակին:

4.Ամփոփել գրատախտակին գրված արտահայտությունները, ասելով, որ դրանք հավասարություններ և անհավասարություններ են:

5.Հաշվել 1-10 թվերը: Մտքում ասել կենտ թվերը, ծափով նշել գույգ թվերը:

6.Գրատախտակի մոտ կանգնում են 10 աշակերտ: Յուրաքանչյուրի ձեռքում կա թիվ-քարտ: Հաշվում են ուղիղ և ետ: Ասվում է որևէ աշակերտի անունը: Նա ասում է իր թիվը, նշում, թե որերորդ տեղում է կանգնած: Հիշեցնում է թե որն է իր նախորդ և հաջորդ թիվը: Այսպես շարունակում է մի քանի աշակերտ:

7.Աշակերտները ցույց են տալիս իրենց աչքերը, ականջները, ոտքերը, ձեռքերը, պարզում՝ յուրաքանչյուրից քանի հատ ունեն: Նշված աշակերտը ցույց է տալիս թե քանի մատ ունի աջ ձեռքում , քանիսը՝ ձախում: Միացնելով ձեռքերն իրար, պարզում թե քանի մատ ունի, թե քանի գույգ են դրանք կազմում:

8.Հիշում են առածներ, որոնք թվեր են պարունակում , մեկնաբանում:

### Խթանման փուլ

Խաղի միջոցով բացատրվում է նոր դասը:

Գրատախտակին փակցված է նկարագարդ թվային առանցքը: Յուրաքանչյուր երեխայի մետ ևս կա թվային առանցք: Բոլորն ունեն ճուտիկներ, որոնք կանգնած են 0-ի վրա:



Պատմվում է հեքիաթ այն մասին, որ ճուտիկը ձվից դուրս է գալիս, ճամփա է ընկնում: Սկզբում 1քայլ է անում, հետո ևս 1 քայլ, հասնում է 2-ին:



Երեխաներն ամեն անգամ պատմում են ճուտիկնեչի քայլերը, հետո մաթեմատիկորեն ուսուցչի օգնությամբ գրվում է գրատախտակին:

8-ի վրա հասնելով ճուտիկը որոշում է տուն վերդառնալ: 1 քայլ ձախ է գալիս, հետո ևս 1 քայլ, հասնում է 6-ին: Այսպես շարունակվում է այնքան մինչև ճուտիկը հասնում է 0-ին: Բոլորի ճուտիկները կանգնում են 0-ի վրա:

*Ամփոփում* - Աջ գնացինք գումարեցինք,  
Ձախ գնացինք հանեցինք,  
Ճուտիկին տուն բերեցինք:

Աշակերները բացում են տետրերը, գրատախտակին գրված արտահայտությունները արտագրում:





